ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄԸ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆ

ԳՈՒՄԱՐԵԼՈՒ, ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՐԿՈՒ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ ԵՐԿՈՒ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 6-7-րդ մասերով, ինչպես նաեւ 8-րդ մասի 2-րդ կետով՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը որոշեց.

Ազգային ժողովի խորհրդին ներկայացնել միջնորդություն՝

2022թ.-ի հուլիսի 14-ին, ժամը 11:00-ին՝ Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ արտահերթ նստաշրջան գումարելու, նստաշրջանի օրակարգում երկու ընթերցմամբ ընդգրկված օրենքների նախագծերը երկու ընթերցմամբ քննարկելու վերաբերյալ:

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» եւ կից օրենքների նախագծերի փաթեթի ընդունման հրատապությունը պայմանավորված է օրենքի նախագծերի փաթեթով առաջարկվող Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին եւ անդամներին կարգավորումները ՀՀ սահմանադրությանը համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

«Հայաստանի հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» սահմանդրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծով հակակոռուպցիոն գործերի մասնագիտացված և պատշաճ քննությունն ապահովելու և համապատասխան ատյանների ստեղծման գործընթացն արագացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել սահմանել, որ հակակոռուպցիոն դատարանը սկսում է գործել կոռուպցիոն հանցագործությունների քննությանգործերով մասնագիտացմամբ հինգ դատավորների նշանակման պահից, իսկ վերաքննիչ դատարաններում նման գործեր քննող դատավորները պաշտոնավարումը սկսում են երեքական առանձին դատավորներ նշանակվելու պահից:

«Դիվանագիտական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով գործնականում առաջացած այնպիսի խնդիրների լուծման անհրաժեշտությունը, որոնք կապված են արտաքին գործերի նախարարության բնականոն գործունեության ապահովման, արդյունավետության բարձրացման, ինչպես նաեւ հանրային ծառայության վերաբերյալ օրենսդրության հետ ներդաշնակեցման ապահովման հետ:

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում ավտոտրանսպորտային գործունեությունը ներառական եւ մատչելի դարձնելու, հաշմանդամություն ունեցող ուղեւորների իրավունքների իրացման համար իրավական հիմքեր ստեղծելու անհրաժեշտությամբ, ինչպես նաեւ միջազգային պայմանագրերով ստանձնած Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարմամբ:

«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային իրավունքների պաշտպանության իրավական հիմքերի հստակեցման, ներպետական օրենսդրության ներդաշնակեցման անհրաժեշտությամբ եւ բխում է ՀՀ Սահմանադրությունից եւ միջազգային պայմանագրերով ստանձնած երկրի պարտավորություններից:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

11.07.2022թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1.Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 5-րդ մասը Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ քառորդի նախաձեռնությամբ 2022թ-ի հուլիսի 14-ին գումարված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի օրակարգում երկու ընթերցմամբ ընդգրկված նախագծերի երկրորդ ընթերցմամբ քննարկումը կազմակերպել առաջին ընթերցմամբ դրա ընդունումից հետո՝ 24 ժամվա ընթացքում:
2) Առաջին ընթերցմամբ ընդունված նախագծերի վերաբերյալ գրավոր առաջարկները, ինչպես նաև գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար սահմանել երեքական ժամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

2022 թվական, հուլիսի —